Ֆիզիկական անձանց հաշվի բացման փաստաթղթերի ցանկ

1. **<u>ՀՀ քաղաքացի հանդիսացող ՀՀ ռեզիդենտ</u>**

1.1. Հաշիվ բացելու դիմում-պայմանագիր,
1.2. Անձը հաստատող փաստաթուղթ,
1.3. Հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտ) կամ վերջինս չունենալու մասին տեղեկանք (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում չի պահանջվում),
1.4. Ռեզիդենտի «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (KYC):

2. **<u>ՀՀ քաղաքացի չհանդիսացող ՀՀ ռեզիդենտ</u>**

2.1 Հետևյալ փաստաթղթերից մեկը՝
2.1.1 օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիրը,
2.1.2 ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված),
2.1.3 կացության վկայական,
2.1.4 ՀՀ հատուկ կարգավիճակի անձնագիր:
Եթե հաճախորդը ներկայացնում է միայն 2.1.1 կամ 2.1.2 ենթակետերում նշված փաստաթղթերը, ապա ռեզիդենտության հաստատման համար հաճախորդը պետք է նաև ներկայացնի 2.1.3 կամ 2.1.4 կամ 2.3 կետերի փաստաթղթերը:
Եթե հաճախորդի մոտ առկա են 2.1 կետում նշված փաստաթղթերից մի քանիսը, ապա բոլորն ընդունվում են Բանկի կողմից:
2.2 Հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտ) կամ վերջինս չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում, պարտադիր է միայն, եթե որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացվում է կացության վկայական կամ ՀՀ հատուկ կարգավիճակի անձնագիր),
2.3 Կացության վկայականի կամ ՀՀ հատուկ կարգավիճակի անձնագրի բացակայության դեպքում հետևյալներից մեկը՝
2.3.1 առնվազն 3 ամիս ժամկետով անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ վավերացված նոտարական կարգով,
2.3.2 փաստացի բնակության վայրի վերաբերյալ տեղեկանք,
2.3.3 աշխատավայրից տեղեկանք կամ աշխատանքային պայմանագիր կամ սեփական բիզնես գործունեության փաստաթուղթ:
2.4 Ռեզիդենտի «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (KYC):

3. **<u>Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝</u>**

3.1 Անձը հաստատող փաստաթուղթ,
3.2 Ոչ Ռեզիդենտի «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (KYC):

4. **Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:**

<u>Ծանուցում.</u>
<u>Անձը հաստատող փաստաթուղթը ներկայացվում է բնօրինակը, Բանկում մնում է պատճենը:</u>

<u>Ոչ ռեզիդենտների դեպքում բոլոր օտարալեզու փաստաթղթերը ներկայացվում են հյուպատոսական կամ նոտարական վավերացմամբ՝ ապոստիլով վավերացված (եթե այլ կարգ նախատեսված չէ ՀՀ միջազգային համաձայնագրերով) և հայերեն թարգմանությամբ (նույնականացման փաստաթղթերի (անձնագրի և այլն) նոտարական վավերացմամբ հայերեն լեզվով թարգմանությունը պարտադիր չէ ռուսերեն լեզվով ներկայացված փաստաթղթերի համար, որը կարող է պահանջվել ըստ անվան/ազգանվան բարդության):</u>

<u>Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարգով» սահմանված այլ փաստաթղթեր:</u>